# Գիտությունների ակադեմիայի վերակառուցման շուրջը

բաժիններից մեկն է միայն: Այնինչ հայագիտական հետազոտությունները պետք է կարեւորագույն բաժինը լինեին մեր ակադեմիական գիտության մեջ: Պետք է մտածել հայագիտության կարգավիճակի փոփոխության մասին, եւ կառավարությանը կից հայագիտության խորհրդի ստեղծման գաղափարը արժանի է ամենայն պատշաճության: Մեր հայագիտությունը պետք է կարողանա լայնորեն ներկայանալ միջազգային գիտական շրջանակներում, իսկ դրա համար պայմաններ են պետք:

Հիմա՝ ակադեմիայի վերակառուցման մասին:

Ակադեմիան ամենից առաջ պետական գիտահետազոտական հաստատությունների համակարգ է. սա ակադեմիայի այն հատկանիշն է, որը նրան դարձնում է անփոխարինելի մեր երկրի կյանքում: Այդ հաստատությունների մեծ մասը ակադեմիայի գոյության ընթացքում արդարացրել է իրեն, եղել հայկական գիտության զարգացման գլխավոր օջախները (չմոռանալով համալսարանի եւ մյուս բուհերի դերը): Բայց գործող կանոնադրությամբ ինստիտուտները գրեթե մասնակցություն չունեն ակադեմիայի կառավարմանը: Ակադեմիայի բարձրագույն մարմինը համարվում է ակադեմիայի ընդհանուր ժողովը, որի կազմում չեն ընդգրկվում ինստիտուտների կոլեկտիվների ներկայացուցիչները եւ տնօրենները, եթե նրանք ակադեմիայի անդամ չեն: Առաջին հատունացած խնդիրը սա է:

Այն, ինչ այսօրվա կանոնադրության մեջ անվանվում է ակադեմիայի ընդհանուր ժողով, ուղղակի ֆիզ կամ ունի գիտահետազոտական հաստատությունների հետ: Նրա կազմում ընտրված գիտնականների մի զգալի մասը դրսի կազմակերպությունների ներկայացուցիչ է եւ միայն մոտավոր գաղափար կարող է ունենալ ակադեմիական հաստատությունների ներքին կյանքի եւ խնդիրների մասին: Նրանց մասնակցությունը ակադեմիական գործերին սովորաբար սահմանափակվում է տարին մեկ անգամ գումարվող ընդհանուր ժողովներին մասնակցելով եւ ժամանակ առ ժամանակ այս կամ ակադեմիական ստուգմանը մասնակցելով: Այսպիսի ընդհանուր ժողովը չի կարող ակադեմիայի ղեկավար մարմին լինել: Ակադեմիան պետք է ղեկավարվի մի մարմնի կողմից, որի կազմում են ինստիտուտների ներկայացուցիչները: Այնինչ ակադեմիայի նախագահության կազմում ինստիտուտի մի տնօրեն անգամ չկա: Այսպիսի կառուցվածքը այլեւս չի բավարարում ժամանակի պահանջները:

կադեմիայի ընդհանուր ժողովն իր այսօրվա կազմով եւ իրավունքներով անախրոնիզմ է: Եթե մենք ուզում ենք իրական բարեփոխումներ կատարել ակադեմիական գիտության բնագավառում, առաջին հերթին պետք է մտածել այս մասին: Ակադեմիան պետք է կառավարի ակադեմիայի գիտական անձնակազմի ընտրած մարմինը, որտեղ ներկայացված կլինեն բոլոր ակադեմիական հաստատությունները: Այդ ժողովն էլ պետք է ընտրի ակադեմիայի ղեկավարներին:

Այդ դեպքում ինչպիսի՞ն պետք է լինի ակադեմիայի անդամի ինստիտուտի ճակատագիրը: Ցավոքաց բարդ խնդիր է: Ակնհայտ է, որ մանավանդ վերջին երկու ընտրություններից հետո այդ ինստիտուտի հեղինակությունը եւ լայն հասարակայնության, եւ բուն ակադեմիական շրջաններում խիստ ընկել է: Շատ ցավալի, եթե չասեմ ողբերգական իրավիճակ է: Մենք անընդհատ հիշում ենք Իսահակյանին, Աբեղյանին, Օրբելուն, Վիկտոր Համբարձումյանին, Մանանդյանին եւ ակադեմիայի գոյության առաջին տասնամյակների մյուս ակադեմիկոսներին. բայց այսօրվա ընդհանուր ժողովի պատկերը բոլորովին այլ է: Վերջին ընտրությունների մասին ուզում եմ բերել երկու վկայություն ակադեմիայի ներսից, վկայություններ, որոնք հրապարակվել են մամուլում (դրանք պատկանում են գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներին): Ակադեմիկոս **Արամ Գրիգորյանը** գտնում է, որ ակադեմիայի վերջին ընտրությունները զզվելի ընտրություններ էին («**Ազգ**», 16 դեկտեմբերի, 2006): Ակադեմիկոս **Դավիթ Սեդրակյանը** ասում է. «Այս ընտրությունների գլխավոր պարադոքսը եւ ողբերգությունը նրանում է, որ ակադեմիայի կազմը հիմնականում լրացրին առուսայդերները» («Նովոյե վրեմյա», հունվարի 23, 2007): Անշուշտ, ընտրվածների մեջ արժանավոր մարդիկ շատ կան: Բայց ընդհանուր պատկերը տխուր է: Ակադեմիական ընտրությունները ավելի ու ավելի են դառնում գիտության հետ կապ չունեցող կազմակերպչական ընդունակությունների եւ այլ տիպի հմտությունների տուրնիր: Այդ ընտրությունները այսօր միայն նյարդայնության մթնոլորտ են ստեղծում ակադեմիական հիմնարկներում եւ խանգարում են այդ հիմնարկների բնականոն աշխատանքին:

Ակադեմիան երկար ժամանակ եղել է ամենահեղինակավոր կազմակերպություններից մեկը մեր ժողովրդի աչքում: Բայց այսօր, շնորհիվ մամուլի, ակադեմիայի ներքին կյանքը բացվում է եւ ցուցադրում իր ամենաստած կողմերը: Ընտրությունների ելքը, ի վերջո, որոշում են վա կազմից: Հիմա նրա մտահոգությունը ինձ համար միանգամայն հասկանալի է: Նա նկատի ուներ 2000-ի ընտրությունները: Այս վերջին ընտրությունները առաջացրեցին, որ Գուրզադյանի հոռետեսությունը միանգամայն արդարացված է:

Ներկայումս ակադեմիայի անդամի տիտղոսի եւ պատվավճարի համար ընթացող պայքարը միայն խանգարում է գիտական հիմնարկներին: Կուզեի, որ բոլորս մեզ հարց տայինք՝ այսօր ի՞նչ են տալիս գիտության զարգացմանը ակադեմիայի անդամների ընտրությունները: Ես անձամբ չեմ կարծում, թե որեւէ բան տալիս են: Ուստեմն, եթե այդ տիտղոսն ու պատվավճարը պետք է պահպանվեն, շատ լրջորեն պետք է մտածել դրանց իմաստն ու հեղինակությունը վերջնական անկումից փրկելու մասին: Իսկ դրա համար պետք է գնալ էական վերափոխումների, ինչքան էլ դրանք ցավոտ լինեն: Դրա համար տարբեր ուղիներ կարելի է առաջարկել: Մի բան, իմ կարծիքով, անվիճելի պետք է լինի՝ եթե ակադեմիայի անդամներին ընտրում են ակադեմիկոսները, դա պետք է անեն բաց քվեարկությամբ: Միայն բաց քվեարկությամբ: Ակադեմիան չպետք է վերածվի փակ կաստայի: Քվեարկողը պետք է գիտական հասարակայնության առջեւ պատասխանատվություն կրի իր ձայնի համար: Բայց կա, թերեւս, ավելի ճիշտ ճանապարհը: Ակադեմիայի նոր անդամներին պետք է ընտրի մի ժողով, որի կազմում են ե՛ւ ակադեմիայի անդամները, ե՛ւ ակադեմիական կոլեկտիվների ներկայացուցիչները՝ հավասար իրավունքներով: Այս ժողովը միայն իրավունք կունենա կոչվելու ակադեմիայի ընդհանուր ժողով:

Մամուլից հայտնի է, որ գործում է գիտության բարեփոխումների ծրագիրը մշակող միջգերատեսչական հանձնաժողով: Տարօրինակ է, որ այդ հանձնաժողովի կազմում, իմ տեղեկություններով, ակադեմիական որեւէ ինստիտուտի տնօրեն չկա: Այնինչ գիտահետազոտական աշխատանքների կենտրոնները հենց ինստիտուտներն են: Այսօր պետք է մտածել եւ այդ բարեփոխումների, եւ, դրանց հիման վրա ակադեմիայի իսկապես նոր, այսօրվա իրողություններին համապատասխանող կանոնադրության ստեղծման մասին, այդ աշխատանքներում ներգրավելով առաջին հերթին ակադեմիական հասարակայնության ներկայացուցիչներին, բոլոր նրանց, ովքեր զբաղված են գիտության ամենօրյա հոգսերով:

**ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ,**
**ՀԱԱՀ գրականության ինստիտուտի տնօրեն**